Նախագահ
Թոմաս Ս. Մոնսոն

Աշխարհն այսօր ռահվիրաների կարիք ունի

Շատերի համար 1847թ. ռահվիրաների գաղթը չսկսվեց Նավույում, Կիրթլենդում, Հեռավոր Արևմուտքում կամ Նյու Յորքում, այլ, ավելի շուտ, սկսվեց հեռավոր Անգլիայում, Շոտլանդիայում, Սկանդինավիայում կամ Գերմանիայում: Փոքր երեխաները չէին կարող ամբողջովին ըմբռնել այն եռանդուն հավատքը, որը մղում էր իրենց ծնողներին ետևում թողնել ընտանիքին, ընկերներին, հարմարավետությունը և ապահովությունը:

Մի փոքրիկ կարող էր հարցնել. «Մայրի՛կ, ինչու՞ ենք հեռանում տնից: Ու՞ր ենք գնում»:

«Ե՛կ այստեղ, թանկագի՛նս. մենք գնում ենք Սիոն՝ մեր Աստծո քաղաքը»:

Տան ապահովության և Սիոնի խոստումի միջև կանգնած էին վիթխարի Ատլանտյան օվկիանոսի բորբոքված ու նենգ ջրերը: Ո՞վ կարող է նկարագրել այն վախը, որը հափշտակել էր մարդկային սիրտը այդ վտանգավոր անցումների ժամանակ: Առաջ ընթանալով Հոգու մեղմ շշունջներով, պաշտպանվելով պարզ, բայց հաստատուն հավատքով՝ այդ ռահվիրա Սրբերը վստահում էին Աստծուն, և սկսեցին իրենց նավագնացությունը:

Նրանք վերջապես հասան Նավու, միայն որպեսզի նորից դեմ առ դեմ դուրս գան ճանապարհի դժվարություններին: Երեսպակե և ապարե գերեզմանաքարերը թողնում էին գերեզմանների հետքեր Նավույից դեպի Սոլթ Լեյք Սիթի ողջ ճանապարհին: Այսպիսին էր գինը, որ որոշ ռահվիրաներ վճարեցին: Նրանց մարմինները հողին են հանձնված խաղաղությամբ, բայց նրանց անուններն ապրում են հավիտյան:

Հոգնած ցլերը խճողում էին, սայլակների անիվները՝ ճռճռում, խիզախ տղամարդիկ՝ ծանր աշխատում, պատերազմի թմբուկները՝ հնչում և դաշտագայլերը՝ ոռնում: Բայց հավատքով ոգեշնչված և փոթորկից քշված ռահվիրաներն առաջ էին ընթանում: Հաճա՛խ էին երգում նրանք.

Եկեք, Սրբեր, ոչնչից չերկնչենք,
Ուրախ առաջ գնանք:
Թեև ճամփան դժվարագույն կարծենք՝
Օրհնություն կստանանք: . . .
Լավ է, լավ ամեն բան:[1]

Այս ռահվիրաները հիշում էին Տիրոջ խոսքերը. «Իմ ժողովուրդը պետք է փորձվի բոլոր բաներում, որ կարողանա պատրաստվել այն փառքն ընդունելուն, որը ես ունեմ նրանց համար, այսինքն՝ Սիոնի փառքը»:[2]

Ժամանակի ընթացքը մթագնում է մեր հիշողությունը և նվազեցնում է մեր գնահատականը նրանց նկատմամբ, ովքեր քայլել են ցավի ճանապարհով՝ հետևում թողնելով անանուն գերեզմանների արցունքով դրոշմված հետք: Բայց ի՞նչ կասեք այսօրվա մարտահրավերների մասին: Չկա՞ն անցնելու քարքարոտ ճանապարհներ, բարձրանալու խորդուբորդ լեռներ, անցնելու անդունդներ, այրելու հետքեր, ծանծաղուտով անցնելու գետեր: Կամ կա՞ հենց ներկայումս այդ ռահվիրա ոգու անհրաժեշտությունը, որ ուղեկցի մեզ հեռու այն վտանգներից, որ սպառնում են կուլ տալ մեզ, և առաջնորդի մեզ դեպի ապահովության Սիոն:

Տասնամյակների ընթացքում՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, բարոյականության չափանիշները կրկին ու կրկին նվազում են: Հանցագործությունը արագ վեր է բարձրանում, պարկեշտությունը՝ ներքև գլորվում: Շատերը աղետի ալեկոծվող, վիթխարի նավի վրա են՝ փնտրելով պահի տպավորությունները, մինչ զոհաբերում են հավերժության ուրախությունը: Այսպիսով, մենք կորցնում ենք խաղաղությունը:

Մենք մոռանում ենք, թե ինչպես հույներն ու հռոմեացիները հրաշալիորեն իշխում էին վայրագ աշխարհում, և ինչպես այդ հաղթանակը ավարտվեց, ինչպես անզգործությունը և մեղմությունը վերջապես հաղթեցին նրանց՝ տանելով դեպի իրենց կործանումը: Ի վերջո, ազատությունից առավել, նրանք ուզում էին անվտանգություն և հարմարավետ կյանք, իսկ նրանք կորցրեցին ողջ հանգստությունը, անվտանգությունը և ազատությունը:

Տեղի մի՛ տվեք Սատանայի գայթակղություններին, այլ ամուր կանգնեք ճշմարտության համար: Հոգու չհագեցած ծարավը չի բավարարվի զգացմունքների ցնցող տպավորության և չարիքի մեջ ուրախության անվերջ փնտրտուքով: Չարիքը երբեք չի տանում դեպի առաքինություն: Ատելությունը երբեք չի խթանում սեր: Վախկոտությունը երբեք չի տալիս խիզախություն: Կասկածը երբեք չի ոգեշնչում հավատք:

Ոմանք դժվարանում են տանել այն հիմարների ծաղրը և տհաճ դիտողությունները, ովքեր ծաղրում են մաքրաբարոյությունը, ազնվությունը և Աստծո պատվիրաններին հնազանդվելը: Բայց աշխարհը միշտ նվազեցրել է չափանիշներին հարելու կարևորությունը: Երբ Նոյին հանձնարարվեց կառուցել տապան, հիմար ժողովուրդը նայեց անամպ երկնքին և հետո ծաղր ու ծանակ արեց, մինչև որ անձրևն եկավ:

Պե՞տք է, որ կրկին ու կրկին սովորենք նման արժեքավոր դասեր: Ժամանակները փոխվում են, բայց ճշմարտությունը համառում է: Երբ մենք ձախողվում ենք օգուտ քաղել անցյալի փորձառություններից, մենք դատապարտվում ենք կրկնելու դրանք իրենց ողջ կսկիծով, տառապանքով ու տանջանքով: Չու՞նենք մենք արդյոք իմաստություն, որպեսզի հնազանդվենք Նրան, ով գիտի ավարտն ի սկզբանե՝ մեր Տիրոջը, ով կազմել է փրկության ծրագիրը, քան այն օձին, ով արհամարհեց դրա գեղեցկությունը:

Բառարանը ռահվիրա բառը սահմանում է որպես մեկը, ով գնում է առջևից՝ պատրաստելով կամ բացելով ճանապարհ մյուսների համար, որպեսզի հետևեն: [3]: Կարո՞ղ ենք ինչ-որ կերպով ցուցաբերել այն խիզախությունը և նպատակի հաստատակամությունը, որ բնութագրում էր նախորդ սերունդների ռահվիրաներին: Դու և ես կարո՞ղ ենք, իրականում, լինել ռահվիրաներ:

Գիտեմ, որ կարող ենք: Օ՜, աշխարհը որքան ռահվիրաների կարիք ունի այսօր:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Եկեք Սրբեր», *Հիմներ,* համար 30:
2. Վարդապետություն և Ուխտեր 136.31:
3. *Օքսֆորդի Անգլերեն Բառարան,* 2-րդ հրատ. (1989), «ռահվիրա»:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Սուրբ գրությունները բացատրում են, որ տնային ուսուցիչները պետք է «զգուշացնեն, մեկնաբանեն, հորդորեն և ուսուցանեն և բոլորին հրավիրեն գալ Քրիստոսի մոտ» (ՎԱՈՒ 20.59): Խորհեք՝ ուշադրություն դարձնելով զգուշացումներին և հրավերքներին, որ պարունակվում են Նախագահ Մոնսոնի ուղերձում նրանց համար, ում այցելում եք: Դուք, գուցե, ցանկանաք նրանց հետ քննարկել արդար օրինակները ճանաչելու և դրանց հետևելու, խաբեություններից խուսափելու և ուրիշների սխալներից սովորելու ուղիները: Հարցրեք նրանց, ում ուսուցանում եք, թե ինչպես նրանք կարող են լինել ռահվիրաներ այսօր:

Երեխաները կարող են հաճույքով ավելին սովորել ռահվիրաների մասին՝ կարդալով Հետքերով շարքը այս թողարկման 62-րդ էջում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Հավատքով առաջնորդվել

Մեգի Բրլ

Ես երբեք չեմ մոռանա ԱՄՆ-ում Նեբրասկայի Վինթերս Քվոթերսում հողի վրայով քայլելը, որտեղ տարիներ առաջ ռահվիրաներն են ապրել: Հողը սուրբ էր թվում, կարծես, ես այցելում էի բացօդյա տաճար:

Աչքերս արցունքով լցվեցին՝ մշուշելով տեսողությունս: Տեսա մի արձան, բայց չկարողացա նշմարել անձանց: Երբ մաքրեցի արցունքներս, տեսա մի տղամարդ և կին, ում դեմքերին թախիծ կար: Երբ ավելի մոտիկից նայեցի, տեսա նորածնի կերպարը՝ պառկած գերեզմանում՝ նրանց ոտքերի մոտ:

Այս տեսարանից լցվեցի շատ հույզերով՝ տխրությամբ, զայրույթով, երախտագիտությամբ և ուրախությամբ: Ես ուզում էի հեռացնել այդ սրբերի զգացած ցավը, բայց, միևնույն ժամանակ, երախտապարտ էի այն ամենի համար, որ նրանք զոհաբերել էին հանուն ավետարանի:

Վինթերս Քվոթերսում իմ փորձառությունն օգնեց ինձ հասկանալ, որ Երկնային Հայրը տալիս է ավետարանը Իր զավակներին, և ընտրության իրավունք է տալիս նրանց վարվել դրա հետ այնպես, ինչպես կամենան: Այդ երեխայի ծնողները կարող էին ընտրել ավելի հեշտ ընթացք: Մարգարեին հետևելը և ավետարանով ապրելը պահանջում էր այս ռահվիրաներից առաջ գնալ, նույնիսկ եթե դա նշանակում էր թաղել իրենց երեխային: Բայց նրանք ընտրեցին ավետարանը իրենց կյանք տանել և ընդունեցին իրենց մարտահրավերները: Ես սովորեցի, որ սրբերի նվիրվածությունն ավետարանի նկատմամբ և իրենց առաջ ընթանալու վճռականությունն առաջնորդվում էր հավատքով և հույսով՝ հույս դեպի պայծառ ապագա, և հավատք, որ Տերը գիտեր նրանց և կարող էր մեղմացնել իրենց ցավը:

Հեղինակն ապրում է Հյուսիսային Կարոլինայում, ԱՄՆ:

ԵՐԵԽԱՆԵՐ

Եղի՛ր Ռահվիրա

Նախագահ Մոնսոնն ասում է, որ ռահվիրան նա է, ով ցույց է տալիս ճանապարհը, որպեսզի մյուսները հետևեն: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի պայքարեք ճշմարտության համար և լինեք ռահվիրա ձեր համայնքում և ընտանիքում: Գրեք ձեր պատասխանները և կիսվեք դրանցով ձեր ընտանիքի հետ:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/12:
Թարգմանության հաստատումը. 6/12:*First Presidency Message, July 2013*-ի թարգմանությունը Armenian 10667 201

Ուսուցանել և ուսանել ավետարանը

Ուսումնասիրեք այս նյութն աղոթքով և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

Հավատք • Ընտանիք • Սփոփանք

Հիսուս Քրիստոսը մեծ ուսուցիչ էր: Նա մեզ համար սահմանեց օրինակ, քանի որ Նա «ուսուցանում էր կանանց բազմության մեջ և անհատապես, փողոցում և ծովեզրին, ջրհորի մոտ և իրենց տներում: Նա ցուցաբերում էր քնքուշ բարություն նրանց նկատմամբ և բժշկում էր նրանց և նրանց ընտանիքի անդամներին»:[1]

Նա ուսուցանում էր Մարթային և Մարիամին և «հրավիրում էր նրանց դառնալ Իր հետևորդները և ճաշակել փրկությունից՝ «այդ բարի բաժնից» [Ղուկաս 10.42], որ երբեք չէր վերցվի նրանցից»:[2]

Մեր վերջին օրերի սուրբ գրություններում Տերը մեզ պատվիրել է «միմյանց ուսուցանել արքայության վարդապետությունը» (ՎևՈւ 88.77): Վարդապետության ուսուցանման և ուսանման վերաբերյալ Չերիլ Ա. Էսպլինը՝ Երեխաների Միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդականը, ասել է. «Ավետարանի վարդապետությունները ամբողջովին հասկանալ սովորելը կյանքի տևողության գործընթաց է և գալիս է «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ»(2 Նեփի 28.30)»:[3]

Եթե մենք մենք սովորենք, ուսումնասիրենք և աղոթենք, մենք կուսուցանենք Սուրբ Հոգու զորությամբ, ով կտանի մեր ուղերձը «մինչև մարդկանց [և կանանց] զավակների սրտերը» (2 Նեփի 33:1):

Սուրբ գրություններից

Ալմա 17.2–3; 31.5; Վարդապետություն և Ուղտեր 42.12–13; 84.85

Մեր պատմությունից

Մեր նախկին մարգարեները մեզ հիշեցրել են, որ մենք՝ որպես կանայք ունենք ուսուցչի կարևոր դեր տանը և Եկեղեցում: 1979թ. սեպտեմբերին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը (1895–1985) խնդրեց մեզ դառնալ «քույր բիբլիագետներ»: Նա ասել է. «Դարձեք սուրբ գրքերի մասնագետներ՝ ոչ թե մյուսներին ցածրացնելու, այլ բարձրացնելու համար: Ի վերջո, ո՞վ ավելի մեծ կարիք ունի «գանձելու» ավետարանի ճշմարտությունները (որոնք կարող են կիրառել իրենց կարիքի պահին), քան կանայք և մայրերը, ովքեր այդքան շատ խնամում և սովորեցնում են»:[4]

Մենք բոլորս ուսուցիչներ և ուսանողներ ենք: Երբ մենք ուսուցանում ենք սուրբ գրություններից և մեր կենդանի մարգարեների խոսքերից, մենք կարող ենք օգնել ուրիշներին գալ դեպի Քրիստոսը: Երբ ընդգրկվում ենք սովորելու գործընթացի մեջ՝ իմաստալից հարցեր տալով և հետո լսելով, մենք կարող ենք գտնել պատասխաններ, որ բավարարում են մեր անձնական կարիքները:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 3:
2. *Իմ արքայության դուստրերը,* 4:
3. Չերիլ Ա. Էսպլին՝ «Ուսուցանել մեր երեխաներին հասկանալ », *Լիահոնա* և *Ensign,* մայիս, 12, 2012թ.:
4. Սպենսեր Վ. Քիմբալ, *Իմ Արքայության Դուստրերը,* 50:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս եմ ես պատրաստվում ավելի լավ ուսուցիչ լինելու համար:

2. Կիսվու՞մ եմ ես արդյոք իմ վկայությամբ այն քույրերի հետ, ում մասին հոգ եմ տանում:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in USA. Անգլերենի հաստատումը. 6/12:
Թարգմանության հաստատումը. 6/12:*Visiting Teaching Message, July 2013*-ի թարգմանությունը Armenian 10667 201